

## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*«Շրջակա միջավայրի նախարարության «Արփիի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2024 թվականի ընթացքում կատարած աշխատանքների*

«Արփիի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել են բազում մոնիթորինգային, գիտական և կրթադաստիարակչական աշխատանքներ 2024 թվականի ընթացքում, որոնք ուղղված են եղել բնական էկոհամակարգի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության պահպանմանը: Բոլոր աշխատանքները կատարվել են 2024թ-ի տարեկան աշխատանքների ծրագրի համաձայն:


«Արփիի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից 2024 թվականի ամփոփ հաշվետվություն:

«Արփի լիճ» ազգային պարկի տարածքներում կենսաբազմազանության , կենդանիների իրավիճակի և տարածվածության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով անցկացվել են կենդանիների որոշ տեսակների ուսումնասիրություններ : ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների առկա կարգավիճակի ուսումնասիրությունների իրազեկման համար «Արփի լիճ» ազգային պարկի տարածքներում տեղադրվել են ֆոտոթակարդներ : Ֆոտոթակարդները ստուգել ենք 1-2 ամիս պարբերականությամբ: Ստացված տվյալների հիման վրա որոշում ենք կենդանիների համար մոտավոր հաշվարկներ , թե ինչ հաճախականությամբ են հանդիպում տվյալ տարածքներում



***Թռչունների թվաքանակի և տեսակային կազմի որոշում .***

«Արփի լիճ» ազգային պարկի տարածքներում շարունակվում են թռչունների որոշ տեսակների /սև արագիլ , գանգրապետուր հավալուսն, վարդագույն հավալուսնի մոխրագույն կռունկի , կարմիր բադի , մոխրագույն սագի , քարարծիվի , տափաստանային ճուռակի , սովորական հողմավոր բազեի ուսումնասիրությունները : Բների գրանցումներն կատարում ենք շրջայցերի ժամանակ , որի ընթացքում ստուգում ենք հին բները , ինչպես նաև գրանցում ենք նոր հայտնաբերված բները :





**Սողունների տեսակների տարածվածությունը «Արփի լիճ» ազգային պարկի տարածքներում**

Սողունների ֆաունան «Արփի լիճ» ազգային պարկի տարածքներում բավական բազմազան է : Ուսումնասիրությունները կատարել ենք դիտարկումների մեթոդով , որի ընթացքում արձանագրվել են հիմնական հանդիպող տեսակները սովորական լորտու , ջրային լորտու , դարասկու իժ , որը ամբողջ Հայաստանում միայն հանդիպում է «Արփի լիճ» ազգային պարկի «Արևելյան» տեղամասում :





**Մողեսներից** հանդիպել են վալենտինի մողեսն , ճարպիկ մողեսը և հայկական մողեսը :



**«Արփի լիճ» ազգային պարկի լճերի և գետերի ձկնատեսակների ուսումնասիրություն**

«Արփի լիճ» ազգային պարկի լճերի և գետերի ձկնատեսակների ուսումնասիրություն կատարել են շատ վաղուց , այդ ժամանակահատվածում եղել են 11 տեսակի ձկներ , որոնցից են ծածանը , կառփը , կարմրախայտն , որը Կարմիր գրքում գրանցված տեսակ է և հիմնականում հանդիպում է գետերի ջրերում և արգելոցային հատվածում :


- **Հավաքված բուսատեսակների / հերբարիումների / գույքագրում** , տեսակային կազմի որոշում և քարտադարանի ստեղծում , շարունակվում են հերբարիումների գույքագրման աշխատանքները :

2024 թվականի ընթացքում մենք ունեցել ենք ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրացի այցելուներ /ավելի քան 3340 այցելու/, ովքեր շրջել են պարկի «Արևմտյան», «Արդենիս և Ալվար», «Ախուրյանի կիրճ» տեղամասերում: Նրանց ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունն ու զբոսաշրջային հնարավորությունները նաև զբոսաշրջիկները տվել են իրենց հուզող հարցերը ազգային պարկի հետ կապված , որոնց տրվել է պատճառ պատասխաններ,

այսպիսով նրանք գրի են առել իրենց կարծիքները, կարծիքների գրքում: Իրականացվել է նաև զբոսաշրջիկներին ամենագնացով շրջայցերի տեղափոխման աշխատանքներ:



Իրականացվել է Արփի լճի և Արդենիս լճակի սառցաշերտի մոնիթորինգ, սառույցի միջին հաստությունը կազմել է փետրվար ամսին 42 սանտիմետր , մարտին՝ 13 սմ, իսկ դեկտեմբերին 7-10 սմ :



**Կատարվել է թռչունների և կենդանիների մշտադիտարկման աշխատանքներ, որի արդյունքում տեղամասերում գիտության և զբոսաշրջության աշխատակիցները**




Ֆիքսել են 37 հատ սովորական հողմավար բազե /*Falco tinnunculus*/, 128 հատ կոնչան բադ /*Anas platyrhynchos*/, 44 հատ մոխրագույն կոունկ /*Grus grus* /, հայկական որոր /*Larus armenicus*/ 750 հատ, կարմիր բադ /*Tadoma ferruginea*/ 17 հատ , սև արագիլ /*Ciconia nigra* / 4 հատ , գանգրափետուր հավալուան/ *Pelecanus*/ - 61 հատ , 41 հատ աղվես /*Vulpes vulpes*/, գայլ / *Canis* / 11 հատ , ջրասամույր /*Lutra lutra*/ 5 հատ , մեծ ձկնկուլ /*Phalacrocorax carbo*/ 27 հատ , նապաստակ /*Lepus*/ - 9 հատ , կաքավ / *Partridge*/ 43 հատ , խայտաքիս /*Vormela peregusna*/ -4 հատ : Մշտադիտարկման արդյունքում կարողացել ենք հավաքել իրեղեն ապացույցներ , նկարների տեսքով , որ կենդանական աշխարհը գտնվում է իր բնականոն կյանքի շղթայի մեջ, և այս շղթան խաթարող չկա:



**Կազմվել է ագրոտուրիզմի ծրագիր,** որի հիմնական կետերից են մեղվաընտանիքների ձեռքբերումն ու մեղվաբուծության զարգացումը, թեյաբույսերի հավաքումը, մշակումը, չորացումն ու վաճառքը, ջերմոցային տնտեսության

զարգացումը, որոնց աշխատանքներին կներգրավվեն նաև ազգային պարկ այցելած զբոսաշրջիկները: Ագրոտուրիզմի ծրագրի նպատակն է զարկ տալ, էկոտուրիզմի զարգացմանը, տարածաշրջանում և տարածաշրջանից դուրս, որը իր հերթին զարկ կտա զբոսաշրջության զարգացմանը Հայաստանում և օգուտ կբերի տնտեսությանը:




## Իրականացվել է կրթադաստիարակչական աշխատանքներ

Շիրակի մարզի թվով 20 դպրոցների աշակերտների հետ / Բերդաշենի միջնակարգ դպրոց, «Արթիկի թիվ 1 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի , «Արթիկի թիվ 2 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի , «Արթիկի թիվ 3 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի , «Գետքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Եղնաջուր համայնքում գործող « Վերադարձ դեպի բնություն» ճամբարի 1-ին հերթափոխի երեխաների հետ , Տարոնիկ գյուղի միջնակարգ դպրոցի, Գյումրու քսանութ դպրոցի , Գյումրու քառասունհինգ միջնակարգ դպրոցի, Գյումրու N8 միջնակարգ դպրոցի ՊՈԱԿ-ի, Թորոս գյուղի միջնակարգ դպրոցի , Գոգհովիտի միջնակարգ դպրոցի, Աշոցքի միջնակարգ դպրոցի, Զույգաղբյուրի միջնակարգ դպրոցի աշակերտների հետ : Հանդիպումների ընթացքում աշակերտներին ներկայացվել է ազգային պարկի դերի ու կարևորության մասին: Հանդիպումների ընթացքում աշակերտներին ներկայացվել է ազգային պարկի դերի ու կարևորության մասին: Կրթադաստիարակչական աշխատանքներ շատ կարևոր դեր են տանում ապագա սերունդներին կրթելու և նոր գաղափարներ ստանլու մեջ: Լպահպանելը:









Հյուրընկալել ենք «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության երեխաներին, որոնց հետ անցկացվել է էքսկուրսիա պարկի տարածքով:





«Համայնքների հզորացման ուղղված կայուն կլիմայական դիմակայությունը բնապահպանական, սոցիալական և կառավարման պրակտիկաների միջոցով» ծրագրի շրջանակներում իրականացվել է միջոցառում էկոթոնի, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի և ՊՈԱԿ-ի մասնակցությամբ: Այս միջոցառումը գրեթե բոլոր մասնակիցների համար բացայատեց Արփին նոր գույների մեջ, եղան բազում առաջարկներ զբոսաշրջության զարգացման համար, որոնք մոտ ապագայում կյանքի կկոչվեն:



«Էկոկանաչ ճամբար՝ բնություն յուրաքանչյուր պահին » ծրագրի շրջանակներում հյուրընկալել ենք ծրագրի 46 երեխաների : Երեխաները զբաղվել են ձկնորսությամբ, ազգային պարկի աշխատակիցները ներկայացրել են ազգային պարկի բուսական և կենդանական աշխարհը , այնուհետև աշխատակիցների ուղեկցությամբ անտառում ձագերին ամրացրել են իրենց կողմից նախօրոք պատրաստված կերամանները :



Հանդիպումներ ենք ունեցել թվով 7 տուրիստական կազմակերպությունների հետ, ներկայացրել ենք ազգային պարկի զբոսաշրջային ներուժը: Հանդիպման նպատակն էր «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը դարձնել զբոսաշրջային դեստինացիա նաև արտագնա զբոսաշրջիկների համար:

Սիրողական ձկնորսությամբ զբաղվողների հետ տարվել են բացատրական աշխատանքներ՝ անվտանգության կանոնները և պարկի ռեժիմը պահպանելու վերաբերյալ:

**Ազգային պարկի տարածքում ՊՈԱԿ-ի աջակցությամբ և ձկնորսների նախաձեռնությամբ կազմակերպվել է սիրողական ձկնորսության մրցույթ:**








Իրականացվել անտառային մոնիթորինգներ , որի ընթացքում որևէ ապօրինի ծառահատումներ և այլ խախտումներ, հիվանդություններ չեն արձանագրվել : Մոնիթորինգի ընթացքում նկատվել են մոտ 150 / մեկ հարյուր հիսուն / քամատապալ և ձյունակոտոր ծառեր :




ՊՈԱԿ-ի աշխատակիցները «Ախուրյանի կիրճ» և «Արևմտյան տեղամասի» անտառներում սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 23-ը անցկացրել են մոնիթորինգ :



Իրականացվել է մաքրության աշխատանքներ՝ աղբահանություն, ինչպես ազգային պարկի ողջ տարածքում, այնպես էլ Ղազանչիի այցելուների կենտրոնի շենքում և շենքի հարակից տարածքներում :



**Պասիվ արևային ջերմոցում իրականացվել է մաքրման աշխատանքներ,** կատարվել է հողաշերտի թարմացում և փխրեցում 140քառ.մ:Ջերմոցում իրականացվել է սածիլների տնկում 530 հատ , որից՝ 300 հատ պոմիդոր, 150 հատ վարունգ, 80 հատ պղպեղ: Կատարվել է ջերմոցային տնտեսության հովացման համակարգի վերանորոգման աշխատանքներ թվով 2 հատ նաև կատարվել է ջերմոցային տնտեսության մշակման աշխատանքներ:





**Խոտհունձի** մեկնարկի հետ կապված ոչ աշխատանքային օրերին աշխատակիցների կողմից իրականացվել է հերթապահություն « Արդենիս Ալվար » և «Արևմտյան» տեղամասերում, որը կարևոր դեր է խաղացել տարածքի պահպանման գործում: Իրականացվել է դեպի ազգային պարկի տեղամասեր տանող ճանապարհների հարթեցման աշխատանքներ մոտ 5 կմ : Ոչ աշխատանքային ժամերին և ոչ աշխատանքային օրերին իրականացվել է շուրջօրյա մուտքի – ելքի հաշվառնման աշխատանքներ վարչական շենքի և ՊՈԱԿ-ի տարածքում , ինչպես նաև տարածքի պահպանություն

Իրականացվել է թռչունների և կենդանիների կադաստրի վարում:



Հովիվների հետ տարվել է բացատրական աշխատանքներ, անասունները պարկի անտառների սահմաններին չմոտեցնելու վերաբերյալ:

Հակահրդեհային միջոցառումների շրջանակում պարկի արգելոցային գոտի մուտք գործելու համար անցագրերի ձեռք բերման գործընթաց է իրականացվել / թվով 118 անցագիր: Կնքվել է հողամասերից օգտվելու պայմանագրեր թվով 80 հատ , որից 67 հատ խոտհարքի , 13 հատ արոտավայրի պայմանագրեր ընդհանուր 1690.8 հա հողատարածք:

Իրականացվել է տեսանկարահանման համակարգերի տեխսպասարկման աշխատանքներ / թվով 14 տեսանկարահանման սարք:

**«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում աշխատակիցների և էկոպարտեկների կողմից իրականացվել է ծառատունկ, տնկվել է 1712 հատ ծառ՝ ազգային պարկի հարակից տարածքում , «Ախուրյանի կիրճ» և «Արևմտյան» տեղամասերում :**







Հանդիպում է տեղի ունեցել «Բնապահպանության և ընդերքի» տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետ Լ. Գասպարյանի , Էկոպարեկային ծառայության Գյումրու «Արփի Լիճ »տեղամասի համակարգող պատասխանատու Վ. Հովհաննիսյանի , «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ժ/պ Տիգրան Հակոբյանի և աշխատակիցների հետ:

Ընդհանուր քննարկում է տեղի ունեցել ձկնագողության , որսագողության , ապօրինի ծառահատման մասին և դրանց կանխարգելիչ միջոցների կիրառման վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել սույն միջոցների շարունակական և խստագույնս կիրառման մասին :



Գիտության բաժնի աշխատակիցները մասնակցել են «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառապարկում կայացած հանրային թեմատիկ միջոցառմանը , որի ընթացքում ներկայացվել է մեր ազգային պակի դերի կարևորության մասին , ինչպես նաև ցուցադրվել է հավաքած խոտաբույսերի տեսակները :

Երևանում մասնակցել են «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ «Վաղ գործողությունների աջակցություն «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» համատեքստում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում նախատեսված աշխատաժողովին :


«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի զբոսաշրջության, բնապահպանական իրազեկման, հասարակայնության հետ կապերի և մոնիթորինգի մասնագետ՝ Հրանտ Ոսկանյանը մասնակցել է Արփա պահպանվող լանդշաֆտի այցելուների կենտրոնում Կովկասի բնության հիմնադրամի կողմից զբոսաշրջության մասնագետների համար կազմակերպված մասնագիտական կարողությունների զարգացման հանդիպում-սեմինարին :

## ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



### «ԱՐՓԻ ԼԻՃ » ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ » ՊՈԱԿ

#### ՋՐԱՇՈՒՇԱՆ

Ջրաշուշանը գտնվում է «Արփի լիճ » ազգային պարկ » ՊՈԱԿ-ի Արդենիս –Ալվար տեղամասի արգելոցային հատվածում , այս հատվածում բացի ջրաշուշաններից մենք ունենք հարուստ բուսածածկ :2024 թվականի ընթացքում «Արփի լիճ » ազգային պարկ » ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է ջրաշուշանների ուսումնասիրություններ , որի ընթացքում պարզ է դարձել , որ համեմատած նախորդ տարիների՝ 2022 -2023թթ եղած քանակությունը կրկնապատկվել է: Դրան նպաստել է ջրի հունի բարձրանալը , որի ընթացքում ջրաշուշանների համար ստեղծվել է ավելի բարենպաստ պայմաններ: Ջրի մակարդակի բարձրացմանը նպաստել է ինչպես կառուցված պատվարները , այնպես էլ հորդառատ անձրևները և ձյան հաստ շերտը :







## ԳԱՆԳՐԱՓԵՏՈՒՐ ՀԱՎԱԼՈՒՄՆ / *Pelecanus crispus* /

«Արփի լիճ » ազգային պարկ » ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցների կողմից 2024 թվականի ընթացքում կատարվել է նաև թռչունների ուսումնասիրություններ : Կատարվել է Գանգրափետուր հավալուսնի / *Pelecanus crispus* / ուսումնասիրություն , որի ընթացքում համեմատական ցուցանիշներից ելնելով նախորդ տարիների համեմատ 2022թ – 540 հատ , 2023թ– 410 հատ , 2024թ–610 հատ , այս տարի քանակական ցուցանիշը ավելացել է , դրան նպաստել են Արփի լճի մակարդակի բարձրանալը : Ջրի մակարդակի բարձրացման արդյունքում կերամիավորն ավելացել

է , կղզիները լիովին մնացել են ջրի մեջ և չեն վերածվել թերակղզիների , ինչի հետևանքով արգելափակվել է գիշատիչների մուտքը դեպի կղզիներ և պահպանվել են կղզիներում բնակվող թռչնատեսակների բներն ու ծագերը : Բացի այդ 2024 թվականի կլիմայական պայմանները ` հաստ ձյան շերտը և հորդառատ անձրևները նպաստեցին ջրի մակարդակի բարձրացմանը ու դրա արդյունքում ձկնատեսակներն ավելի են շատացել , որոնք էլ հանդիսանում են Գանգափետուր հավալուսների / *Pelecanus crispus* / հիմնական կերիչ աղբյուրը :

Ինչպես նաև , սրանց հետ մեկտեղ «Արփի լիճ » ազգային պարկ » ՊՈԱԿ-ի և էկոպարեկային ծառայության աշխատակիցները բարեխղճորեն կատարում են իրենց պարտականությունները , մեր ազգային պարկի թռչնատեսակների և կենդանիների պահպանությունը իրականացնելու համար :



## Ազգային պարկերը և զբոսաշրջային նպատակներով նրանց ներուժի օգտագործման հնարավորությունների վերլուծությունը

2024 թվականի ընթացքում «Արփի լիճ » ազգային պարկ » ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է ազգային պարկերը և զբոսաշրջային նպատակներով նրանց ներուժի օգտագործման հնարավորությունների վերլուծությունը : Զբոսաշրջային ներուժի բացահայտման կարևորագույն տարրը արդյունավետ պլանավորումն է, որի արդյունքում էլ ստեղծվում են բավականին մեծ հնարավորություններ էկոզբոսաշրջության զարգացման համար:

Ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել ՀՀ ազգային պարկերի էկոզբոսաշրջային ներուժը՝ մասնավորապես «Արփի լիճ » ազգային պարկ » ՊՈԱԿ-ի դրանց ավելի հասանելի կապերը, կազմել էկոզբոսաշրջային առավել մատչելի և գրավիչ երթուղիներ:

Այդ նպատակին հասնելու համար ուսումնասիրել ենք առավել մեծ հաճախելիություն ունեցող ազգային պարկերը, անցկացրել ենք սոցիոլոգիական հետազոտություններ՝ հարցումների տեսքով՝ պարզելու համար պոտենցիալ զբոսաշրջիկների նախասիրությունները, հետաքրքրվածությունը ազգային պարկերի նկատմամբ, կատարել ենք հետազոտություններ՝ գնահատելով ՀՀ ազգային պարկերի ընձեռած հնարավորությունները էկոզբոսաշրջային տուրեր կազմակերպելու համար, ինչը և համարում ենք մեր ներկա աշխատանքի գիտական **նորույթը**, ինչպես նաև կազմել ենք էկոերթուղի «Արփի լիճ » ազգային պարկ » ՊՈԱԿ-ի տարածքում:

Առաջնային ենք համարում էկոզբոսաշրջության և ազգային պարկերի արդյունավետ կառավարման համար տարածքի զբոսաշրջային երկարաժամկետ կայունության ուսումնասիրությունը, որն առանց «Զբոսաշրջության լուծման տեխնիկայի պլանավորման, կազմակերպման և կիրառման» անհնար է պատկերացնել[1,3]: Այն հայտնի է որպես նպատակակետի կայուն կառավարում: Այս տեխնիկան նվազագույնի է հասցնում տարածքի բնական ռեսուրսներին հասցվող վնասը՝ միաժամանակ օգնելով այցելուներին և բնակիչներին այնտեղ



իրենց ժամանակն առավելագույնս արդյունավետ անցկացնելուն: Տարածքի զբոսաշրջության կառավարումը կարևորագույն գործիք է պետական և մասնավոր հատվածների ջանքերի կենտրոնացնելու, այցելուների թվի նվազման պատճառների պարզելու, զարգացման մեջ ակտիվ ներդրումներ կատարելու, զարգացման արդյունավետ պլանավորում և օժանդակ միջոցառումներ ձևավորելու [3, 4]:

«Արվիի լիճ » ազգային պարկ » ՊՈԱԿ-ում պահպանության գործունեությունը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ օրինակ, այցելուների կառավարում, համագործակցություն բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների հետ, պահպանվող տարածքներում կենսաբազմազանության պահպանում, ռեսուրսների կառավարում որոնք օգնում են հաշվի առնել այս բոլոր կարիքները՝ կայուն կառավարում իրականացնելու համար:

Անդրադառնալով էկոզբոսաշրջային հոսքերի կառավարմանը՝ կարող ենք ասել, որ ազգային պարկերում զբոսաշրջային հոսքերի ավելացումը հատկապես խոցելի են դարձնում էկոհամակարգերի հավասարակշռության պահպանության խնդիրները: Այդ տեսանկյունից առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում ազգային պարկի կայուն կառավարման պլանների կազմումը, որը լուծում է բնապահպանական բացասական ազդեցությունների չեզոքացման խնդիրը: Կարևոր ենք համարում նաև այցելուների կրթադաստիարակչական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ենթակառուցվածքների խելամիտ բաշխումն էկոլոգիապես զգայուն տարածքներում և պարկ մուտք գործող այցելուների ամենօրյա թվի վերահսկումը, այգու տարածքում հոսքերի բաշխման և վերաբաշխման խնդիրների լուծումը: Դա պայմանավորված է էկոհամակարգերի վրա բացասական մարդածին սահմանային ազդեցություններից խուսափելու խնդրով [4]:


Այնուամենայնիվ ազգային պարկերի վրա հիմնված զբոսաշրջությունը կարող է օգնել երկրներին հասնել իրենց զարգացման նպատակներին՝ միաժամանակ կարող է նպաստել կենսաբազմազանության պահպանմանը: Հարուստ բնական ֆոնդով, բայց սահմանափակ տնտեսական հնարավորություններով երկրներում ազգային պարկերի վրա հիմնված զբոսաշրջությունը կարող է աշխատատեղեր ստեղծել և դիվերսիֆիկացնել

գյուղական տնտեսությունները: Զբոսաշրջիկների կողմից միջոցառումների, տրանսպորտի, սննդի և կացարանի վրա ծախսվող գումարները կարող են դրական տնտեսական աճի աղբյուր հանդիսանալ տեղական համայնքներում: Խթանելով ներդրումներն ու տնտեսական ակտիվությունը պահպանվող տարածքներում և շրջակայքում՝ զբոսաշրջությունը օգուտ է բերում տեղական համայնքներին և ուժեղացնում է պահպանությունն աջակցելու և ներգրավվելու խթանները, ինչը հակառակ դեպքում կարող է ստեղծել հնարավոր ծախսեր նրանց համար [5]:

Կարևորելով պոտենցիալ զբոսաշրջիկների կարծիքը՝ կազմակերպել ենք ընտրանքային սոցիալական հարցում, որն իրականացվել է 2024 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին: Հետազոտել և գնահատել ենք զբոսաշրջությունը «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում: Ընտրանքային սոցիալական մասնակցել է հանրապետության տարբեր մարզերից 101 մարդ, ովքեր պատկանում են տարիքային տարբեր խմբերի, սեռական պատկանելիության և կրթության: Հարցման մասնակիցների 70,3%-ը գյուղաբնակներն են, իսկ 29,7%-ը քաղաքային բնակիչները: Ըստ որի՝ գերակշռող 78,2%-ը կանայք են, իսկ մնացած 21,8%-ը տղամարդիկ:

Սոցիալական մասնակիցների մեծ մասը մինչև 25 տարեկան երիտասարդներ են, որոնց տոկոսային հարաբերությունը կազմում է 45,5%, իսկ 26-45 տարեկաններինը՝ 43,6%, դիագրամը ցույց է տալիս, որ մասնակիցների 9,9%-ը 46-65 տարեկաններն են, իսկ 1%-ը բաժին է ընկնում 66 և բարձր տարիքային խմբին:


1. Տարիք  
101 օրբետ



Գծապատկեր .1) Հարցման մասնակիցների տարիքը

Հետազոտության համար կարևոր ենք համերել նաև հարցվողների կրթական մակարդակը, ըստ որի՝ մասնակիցների գերակշռող մասը՝ 67,3%-ը բարձրագույն կրթություն ունեն, 27,7%-ը՝ միջնակարգ, իսկ մնացած 5%-ը կազմում են միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները.


2. Կրթություն  
101 օրհետ



Գծապատկեր .2) Հարցման մասնակիցների կրթությունը

Անդրադառնալով ազգային պարկերի գրավչությանը՝ այն հարցին, թե դիտո՞ւմ եք ազգային պարկերը որպես զբոսաշրջային վայրեր, ունենք հետևյալ պատկերը.

3. Արդյոք դիտո՞ւմ եք ազգային պարկերը որպես զբոսաշրջային վայրեր  
101 օրհետ




Գծապատկեր .3) Ազգային պարկերը որպես զբոսաշրջային վայրեր

Մասնակիցների 84,2 %-ը ազգային պարկերը դիտարկում են որպես զբոսաշրջային վայրեր, 5,9%-ը կարծում են, որ դրանք զբոսաշրջային վայրեր չեն, իսկ 9,9 %-ը դժվարանում է պատասխանել:



4-րդ հարցը վերաբերվում է մասնակիցների հաճախելիությանը դեպի ազգային պարկեր, նշենք որ մասնակիցների մեծ մասը այցելել են «Դիլիջան» ազգային պարկ, 2-րդ տեղում «Սևան» ազգային պարկն է, հետո այցելվածների թվով Արփի լիճ ազգային պարկն է , և վերջում միայն շատ քչերն են այցելել Արևիք ազգային պարկ:




Գծապատկեր .4)Մասնակիցների հաճախելիությունը դեպի ազգային պարկեր

Այն հարցին, թե ի՞նչն է նրանց գրավում ազգային պարկերում, ունեցանք հետևյալ պատկերը. հարցման մասնակիցների 52,5%-ը գերադասում է հանգստությունը, 30,7%-ը՝ մաքուր օդը, կենսաբազմազանությունը գրավել է նրանց 12,9% ին , իսկ 3,9%-ը ունեին այլ նախասիրություններ:

5.Ի՞նչ է Ձեզ գրավում.


101 օտբետ



Գծապատկեր.5) Հարցման մասնակիցներին գրավելու գործոնները

Մասնակիցները, ունենալով տարբեր նախասիրություններ և ազգային պարկերը համարելով զբոսաշրջային վայրեր, նախապես ծանոթանում են ազգային պարկերի ձևավորման պատմությանը:


6.Նախապես ծանոթանում եք Ազգային պարկի/կամ պարկերի/ ձևավորման պատմությանը  
101 ответ



Գծապատկեր.6) Հարցման մասնակիցների հետաքրքրությունը ազգային պարկերի ձևավորման պատմությանը

Մասնակիցների 45,5%-ը նախապես ծանոթանում է ազգային պարկերի ձևավորման պատմությանը, 32,7%-ին՝ ոչ, իսկ 21,8%-ը չի կարևորում այցելությունից առաջ ազգային պարկերի ձևավորման պատմության մասին ծանոթացումը:

Այն հարցին, թե զբոսաշրջության որ ձևերը կարելի է զարգացնել ազգային պարկերում, տրվել են հետևյալ պատասխանները՝




Գծապատկեր .7)Ի՞նչ եք կարծում զբոսաշրջության, որ ձևերը կարելի է զարգացնել ազգային պարկերում:

Մասնակիցների մեծամասնությունը կարծում է, որ ազգային պարկերում կարելի է զարգացնել էկոզբոսաշրջությունը (50%), հաջորդիվ արկածային զբոսաշրջությունն է(25%), առողջարանայինը՝ (15%), ռեկրեացիոնը (7%), և ագրոտուրիզմը (3%):

Հետազոտելով մասնակիցների կարծիքները՝ զբոսաշրջային ձևերի զարգացման համար ներկայացվել է նաև հետևյալ հարցը՝ արդյոք զբոսաշրջային ակտիվությունը կարող է վնասել պարկերի էկոհամակարգերին, և ստացել ենք հետևյալ պատասխանները

8. Ինչ եք կարծում Ազգային պարկերի զբոսաշրջային ակտիվությունը կարող է վնասել պարկերի էկոհամակարգերին.

102 ответа



Գծապատկեր .8) Ի՞նչ եք կարծում Ազգային պարկերի զբոսաշրջային ակտիվությունը կարող է վնասել պարկերի էկոհամակարգերին:

41,2%-ը կարծում էր, որ զբոսաշրջային ակտիվությունը չի կարող վնասել պարկերի էկոհամակարգերը, 31,4%-ը դժվարացել է պատասխանել, իսկ 27,5%-ի կարծիքով՝ այդ ակտիվությունը կվնասի պարկերի էկոհամակարգերը:


Հարցվածների 18,8%-ի կարծիքով <<Արփի լիճ >> ազգային պարկն ունի զարգացման ամենամեծ ներուժը՝ տրանսկովկասյան ճանապարհին գտնվելու պատճառով: Հարցվողները դրական հատկանիշներից առանձնացնում են հատկապես մաքուր օդը, բազմազան բնությունը, գեղեցիկ բնապատկերները, կենսաբազմազանությունը:

Եվ վերջին կարևոր հարցը, որը նույնպես շատ կարևոր է ազգային պարկերում զբոսաշրջության զարգացման համար, դա պարզելն էր, արդյոք մասնակիցները օգտվում են ազգային պարկերի պաշտոնական կայքէջերից՝



10. Օգտվում եք Ազգային պարկերի պաշտոնական էջերից

101 օրհետ



Գծապատկեր .10) Օգտվում եք Ազգային պարկերի պաշտոնական էջերից:

Ունենք ավելի շատ՝ 65,3% բացասական պատասխան, և միայն 34,7 % դրական, որը արդեն իսկ ազդում է ազգային պարկերի վերաբերյալ մարդկանց տեղեկացվածության, հետևաբար այնտեղ այցելելու ցանկությունների վրա: Վերջինս էլ իր հերթին խոչընդոտում է այստեղ էկոլոգոսաշրջության զարգացմանը:

Ելնելով կատարված սոցիալոգիական արդյունքների վերլուծությունից՝ հանգել ենք այն եզրակացության, որ մեր հետազոտության արդյունքները կարելի է կիրառել ազգային պարկերում էկոլոգոսաշրջային երթուղիներ կազմելիս: Մեր կողմից փորձ է արվել կազմել ճանաչողական, էկոլոգիական, քայլարշավային երթուղի՝ «Արփի լիճ ազգային պարկ» ՊՈԱԿ-ում : Նշենք, որ մեր կազմված էկոլոգոսաշրջային երթուղին իր մեջ ներառում է ոչ միայն բնական հուշարձաններ, այլ նաև մշակութային կոթողներ, որոնք մեծ ճանաչում չունեն Հայաստանում զբոսաշրջային կազմակերպությունների կողմից, անգամ ներառված չեն տուր- փաթեթներում:



օրինակ՝ գանգրափետուր հավալուանին, որի համար Արդենիս լճակը ամենասիրելին է: 6-րդ կանգառը նախատեսում ենք կատարել Բերդաշենում կառուցված ձիարշավարանի մոտ, որտեղ հնարավորություն կա ձիավարությամբ զբաղվելու, ապա երթուղին շարունակվում է դեպի Ղազանչի գյուղը, որտեղ գործում է «Արփի Լիճ» ազգային պարկի թանգարանը: Այստեղ հնարավոր է տեսնել ազգային պարկի ֆլորան և ֆաունան, ինչպես նաև իմանալ նրա կազմավորման պատմությանը: 8-րդ կանգառը Մեծ և Փոքր Սեպասար գյուղերի մեջտեղում գտնվող անտառն է, որտեղ միախառնվում են Ախուրյան գետի հին և նոր հուները, և որոնց վրա կա 17-րդ դարում կառուցված գործող կամուրջ: Վերջին կանգառն այս տարածքում գտնվող Սբ. Հովհաննես մատուռն է, որը շրջապատված է բնական ջրվեժով և գտնվում է անառիկ վայրում:

Այս զբոսաշրջային երթուղու տևողությունը 1 օր է, յուրաքանչյուր կանգառ կարող է տևել մինչև 1 ժամ: Երթուղու ընթացքում նախատեսում ենք հատուկ հատկացված տրանսպորտից օգտվելու հնարավորություն:

## **Եզրակացություններ**

Կատարված հետազոտության արդյունքները մեզ թույլ են տալիս կատարել մի քանի եզրահանգումներ:

1. Հայաստանում էկոզբոսաշրջությունը դեռևս թույլ է զարգացած, որը պայմանավորված է ազգային պարկերի էկոզբոսաշրջային դեստինացիոն հնարավորությունների բացահայտման անբավարար ջանքերով:
2. Ապահովելով զբոսաշրջային հոսքեր և ներդրումներ՝ էկոզբոսաշրջությունը էապես կարող է նպաստել տարածքի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ նվազագույնի հասցնելով բնության և շրջակա միջավայրի վնասները:
3. Ներկայումս շատերին են ձգում բնության գեղեցիկ և անաղարտ անկյունները, որոնցում հնարավոր է հեռանալ ծանրաբեռնված աշխատանքից: Նման տարածքները հիմնականում գտնվում են ազգային պարկերում և արգելոցներում, որտեղ էլ պետք է կազմակերպվեն էկոզբոսաշրջային երթուղիները:



4. Այսպիսով, կարող ենք ասել, որ մասնավորաբար երիտասարդների շրջանում կա սեր և հետաքրքրություն բնության՝ հատուկ պահպանվող տարածքների հանդեպ, որն օրեցօր աճում է՝ անկախ նրանց բնակության վայրից, տարիքից և սեռից:
5. Միաժամանակ ազգային պարկերը կարող են հանդիսանալ մարդ-բնություն փոխհարաբերությունների ամրապնդման, բնության մեջ ճիշտ պահվածքի դաստիարակության ձևավորման կարևորագույն բաղադրիչներից: